

ցի Գէորգի մը զեղծումներուն դէմ կը դատավարէ, ու կ'աշխատի վտարել զանիկա վանքէն. այս դատը կը շարունակուի մինչև 1524, և ուր ուրեմն Թէքայիտցին կ'արտաքսուի վանքէն: Նոյն Յովհաննէս եպս. 1529 ին դատարանական հեռանկներու համաձայն կը նորոգէ Ս. Յակոբի եկեղեցին, Ս. Համբարձման տաճարը և ձառնեղջ. վանքին արտերէն դիւանական պաշտօնագիրերէն ալ կը հասկցուի թէ 1532 ին Յովհաննէս դատարանի միջոցաւ իր պաշտօնը կը յանձնէ Մերտինցի Աստուածատուր եպս. ին՝ որ վանքի գործերուն գլուխ կը կանգնի (Ժպե. հատ. Ա. էջ 251—254): Եթէ այս Յովհաննէս եպս.ը Թլիւրանցի կթղ.ին հետ ուղենք նոյնացնել, զըմուարութեան մը առջև կը գտնուինք. Թլիւրանցին յիշատակարաններու համաձայն 1525 ին վախճանած ըլլալով չէր կրնար 1529 ին վանքին մէջ և այլուր նորոգութիւններ կատարել և 1532 ին ալ դատարանի միջոցաւ իր պաշտօնը փոխանցել ուրիշի մը. ուստի հաւանական է որ իր յաջորդը՝ Յովհաննէս Գ. Քիլիսցին ըլլայ՝ որ կաթողիկոսական հանգամանքովը շարունակած է վանական գործերը և վանքին առաջնորդութեան պաշտօնը յետոյ դատարանով յանձնած է Աստուածատուր եպս. ին: Այլ՝ զանազան յիշատակարաններու լուսաբանութեան համար տեսնել Բարգէն Ս. եպս. Կիւլէսէրեանի յոգուածները (Սիոն, 1928, էջ 215—16. 269—275. 377—379), Կ'ըսուի թէ Յովհաննէս կթղ. Թլիւրանցի յօրինած է նաև այլևայլ քերթուածներ (Երեսկ. 1858. հատ. Գ. էջ 232—233).

**ՅՈՎՀԱՆՆԷՍ (ԽՈՁԱՅ), ՈՐԴԻ ՅՈՎԱՍՏՔ ԽՈՁԱՅԻ, ԵՐՁԸՆԿԱՅԻ.**— 1606 թուին ընտանիքով կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, ուր կը մնայ վեց տարիի չափ ու յետոյ կը մեկնի Պոլիս: Խոճա Յովհաննէս Երզնկայի երեւելի ընտանիքներէն էր և Պոլսի մէջ ունէր ազգեցիկ զիրք մը. Գրիգոր վրդ. Դարանաղցին կը թղթակցէր անոր հետ (Դարանաղցի, էջ 361):

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՐՕՆԱԻՈՐ.**— Մբ. փակակալ Ս. Գերեզմանին Քրիստոսի և ջահավառ Ս. Գողգոթային. 1416 թուին Ս. Յարութեան տաճարին մէջ կ'ընդօրինակէ Աւեստան մը, որուն յիշատակարանն է հետեւեալը. «... Արդ զբացաւ սա ձեռամբ Յովհաննէս սուտ անուն քահանայի... ի մեծափառ և ի գերահրաշ